ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 դեկտեմբերի 2015 թվականի N 326-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-Ի N 222-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի և 3-րդ մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի համայնքի ղեկավարի 2015 թվականի նոյեմբերի 16-ի N 01-267 գրությունը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2015 թվականի օգոստոսի 20-ի ««Գառնիի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը և վերակազմավորման կարգը հաստատելու մասին» N 222-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) կանոնադրության տիտղոսաթերթում և կանոնադրության ընդհանուր դրույթներ բաժնում *«ԳԱՌՆԻԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»* բառերը փոխարինել *«ԿԻՄԱ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԱՌՆԻԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»* բառերով:

2. Հաստատել «Կիմա Խաչատրյանի անվան Գառնիի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը:

3. Հանձնարարել կազմակերպության տնօրենի պաշտոնակատարին անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ կանոնադրության մեջ կատարած փոփոխությունը գրանցելու համար:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2015 թվականի դեկտեմբերի 10
ք. Հրազդան